«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
26 օգոստոսի 2002 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 օգոստոսի 2002 թվականի N 1237-Ն

908 «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական կառավարչական հիմնարկների մասին»[1] Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության Նախագահի 2002 թվականի մարտի 16-ի ՆՀ-1063 հրամանագիրը,[2] Հայաստանի Հանրապետության Նախագահի 2002 թվականի մարտի 16-ի ՆՀ-1064 հրամանագրի[3] 4-րդ կետը և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 6-ի N 199[4] ու 2002 թվականի հունիսի 27-ի N 912-Ն[5] որոշումների Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Ստեղծել «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ:

2. Հաստատել՝

ա) Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի.

բ) Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին երկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմին հանձնվող գույքի կազմի և չափի վերաբերյալ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ա. Մարգարյան**

2002 թ. օգոստոսի 20
Երևան

---

1 ՀՀՊՏ 2001 N 37 (169), 03.12.01
2 ՀՀՊՏ 2002 N 9', 20.03.02
3 ՀՀՊՏ 2002 N 9', 20.03.02
4 ՀՀՊՏ 2002 N 11 (186), 01.04.02
5 ՀՀՊՏ 2002 N 27 (202), 24.07.02

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2002 թվականի
օգոստոսի 8-ի N 1237-Ն որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի պահպանության ու բնական ռեսուրսների բանական օգտագործման բնագավառներում պետական քաղաքականությունը:

2. Նախարարությունն ստեղծվում, վերակազմակերպվում է, և դրա գործունեությունը դադարեցվում է Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով:

3. Նախարարության լիազորությունները սահմանվում են օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, կարգադրություններով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4. Նախարարությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:

5. Նախարարությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և նախարարության հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

6. Նախարարությունը կազմված է նախարարից և նախարարության աշխատակազմից: Նախարարության համակարգում ընդգրկվում են դրա ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունները և հիմնարկները:

7. Նախարարության նպատակը և խնդիրներն են՝

ա) Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական ու բուսական աշխարհի, այդ թվում՝ անտառների և բնության հատուկ պահպանվող տարածքների վրա վնասակար ներգործությունների կանխարգելման կամ նվազեցման, ինչպես նաև բնական ռեսուրսների բանական օգտագործման ու վերականգնման պետական քաղաքականության ձևավորումն ու կառավարումը.

բ) շրջակա միջավայրի ընդերքի, հողերի, ջրերի, մթնոլորտի, կենդանական և բուսական աշխարհի ներառյալ անտառների, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության, բնական ռեսուրսների բանական օգտագործման և վերարտադրության պետական կառավարման ապահովումը.

գ) միջուկային տեղակայանքների, ռադիոակտիվ թափոնների տեղակայանքների և իոնացնող ճառագայթման աղբյուրների միջուկային ու ճառագայթային անվտանգության պետական կարգավորումը.

դ) Հայաստանի Հանրապետության բնապահպանական օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ապահովումը.

ե) Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական ծրագրերում բնապահպանության ոլորտին վերաբերող բաժինների ձևավորման ապահովումը.

զ) բնապահպանության ոլորտի աշխատանքները կանոնակարգող նորմատիվ իրավական և նորմատիվ տեխնիկական ակտերի մշակման ու ներդրման ապահովումը.

է) շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների բանական օգտա-

գործման ու վերականգնման տնտեսական մեխանիզմների, այդ թվում համապատասխան վճարների (փոխհատուցումների) դրույքաչափերի մշակման ու ներդրման ապահովումը.

ը) սահմանված կարգով բնապահպանության ոլորտում պետական պատվերի ձևավորման ու դրա կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ապահովումը.

թ) շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործություն ունեցող օբյեկտների ու տարրերի հաշվառման, ուսումնասիրության և սահմանափակումների սահմանման ապահովումը.

ժ) բնական ռեսուրսների հաշվառման, ուսումնասիրության և օգտագործման նորմերի ու կանոնների սահմանման ապահովումը.

ժա) Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրվող և օգտագործվող վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների կառավարման ապահովումը.

ժբ) շրջակա միջավայրի ու բնական ռեսուրսների մասին տվյալների միասնական հանրապետական ֆոնդերի, կադաստրների ու ռեգիստրների տնօրինման և վարման ապահովումը.

ժգ) շրջակա միջավայրի վիճակի և հիդրոօդերևութաբանական երևույթների ռեժիմային ու հատուկ դիտարկումների, ուսումնասիրությունների և կանխատեսումների իրականացման ապահովումը.

ժդ) շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության իրականացման ապահովումը.

ժե) ընդերքի պահպանության և արդյունավետ օգտագործման ապահովումը.

ժզ) օգտակար հանածոների պահուստային ու լքված հանքավայրերի և հեռանկարային հանքերևակումների մակերեսների ինքնակամ կառուցապատման կանխարգելման ապահովումը.

ժէ) բնապահպանության ոլորտում միջազգային համագործակցության իրականացման ապահովումը:

II. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

8. Նախարարությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառույթները՝

ա) շրջակա միջավայրի՝ ընդերքի, հողերի, ջրերի, մթնոլորտի, կենդանական ու բուսական աշխարհի ներառյալ անտառի, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և բնական ռեսուրսների բանական օգտագործման ու վերարտադրության պետական քաղաքականության ու ռազմավարության մշակումը և դրանց իրականացումը.

բ) միջուկային ու ճառագայթային անվտանգության քաղաքականության ձևավորումը և վերահսկողության իրականացումը.

գ) Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական ծրագրերի բնապահպանության ոլորտին վերաբերող բաժինների մշակումը.

դ) բնապահպանության ոլորտին վերաբերող նորմատիվ իրավական և նորմատիվ տեխնիկական ակտերի մշակումը.

ե) բնապահպանության ոլորտին առնչվող այլ մարմինների կողմից մշակված նորմատիվային ակտերի նախագծերի վերաբերյալ եզրակացությունների տրամադրումը.

զ) շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների բանական օգտագործման և վերականգնման տնտեսական մեխանիզմների մշակումը.

է) շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերի ու կանոնների խախտման հետևանքով պետությանը հասցված վնասի հաշ-

վարկման մեթոդի մշակումը և հասցված վնասի հաշվարկումը.

ը) էկոլոգիական գիտակրթության ռազմավարության հիմնական ուղղությունների մշակումը.

թ) բնական ռեսուրսների, շրջակա բնական միջավայրի վիճակի ուսումնասիրության և պահպանության բնագավառում պետական պատվերի ձևավորումը.

ժ) բնապահպանության ոլորտում պետական պատվերով կատարվող աշխատանքների կազմակերպումը.

ժա) շրջակա միջավայրի վիճակի պետական դիտանցի (մոնիտորինգ) իրականացումը.

ժբ) հիդրոօդերևութաբանական երևույթների ռեժիմային և հատուկ դիտարկումների, ուսումնասիրությունների, կանխատեսումների և հիդրոօդերևութաբանական գործընթացների ու երևույթների վրա ակտիվ ներգործման աշխատանքների իրականացումը.

ժգ) շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործության ուսումնասիրության իրականացումը.

ժդ) շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործություն ունեցող օբյեկտների ու տարրերի և բնական ռեսուրսների պետական հաշվառման իրականացումը.

ժե) օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան վարչական վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) ներդրումը և դրանց միջոցով հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա վարչական վիճակագրական ռեգիստրների վարումը.

ժզ) շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործության և բնական ռեսուրսների օգտագործման պետական նորմավորումը.

ժէ) բնական ռեսուրսների և դրանց հաստատված պաշարների համապատասխան կադաստրների և ռեգիստրների վարումը .

ժը) երկրաբանական ֆոնդի աշխատանքների կազմակերպումը և վարումը.

ժթ) շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության իրականացումը.

ի) Հայաստանի Հանրապետության բույսերի ու կենդանիների Կարմիր գրքերի վարման կարգերի սահմանումը և վարումը.

իա) օտարածին բուսական և կենդանական տեսակներից ու կենդանի վերափոխված օրգանիզմներից կենսաբազմազանության անվտանգությունն ապահովող աշխատանքների կազմակերպումը.

իբ) բնության հուշարձանների հաշվառումը.

իգ) Հայաստանի Հանրապետության ջրի ազգային քաղաքականության և ջրի ազգային ծրագրի նախագծի նախապատրաստման աշխատանքների համակարգումը.

իդ) ջրի ազգային ծրագրի համաձայն ջրային ռեսուրսների սահմանային թույլատրելի կոնցենտրացիայի ու էկոլոգիական նվազագույն ելքերի սահմանումը և կեղտաջրերի թույլատրելի սահմանային արտահոսքի որակական և քանակական չափանիշների հաստատումը.

իե) մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների պետական հաշվառումը և նորմավորումը.

իզ) բոլոր կատեգորիաների հողերի (այդ թվում սանիտարական գոտիների) օգտագործման բնապահպանական նորմերի ու սահմանափակումների սահմանումը և դրանց նկատմամբ վերահսկողության իրականացումը.

իէ) Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշռի կազմման աշխատանքներին մասնակցությունը.

իը) վտանգավոր արդյունաբերական օբյեկտների Անվտանգության վկայագրերի նախագծերի փորձաքննության իրականացումը.

 իթ) Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրվող, օգտագործվող քիմիական նյութերի և առաջացող արտադրական ու սպառման թափոնների, ինչպես նաև արդյունաբերական վթարների ենթակա կազմակերպությունների հաշվառումը.

լ) Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրվող, օգտագործվող քիմիական նյութերի և առաջացող արտադրական ու սպառման թափոնների իր իրավասության սահմաններում ըստ վտանգավորության աստիճանի դասակարգումը և պետական ռեգիստրների վարումը.

լա) օգտակար հանածոների մետաղային, ոչ մետաղային, վառելիքային (պինդ, ածուխ և թերթաքար, հեղուկ նավթ և գազ), ստորերկրյա ջրերի (քաղցրահամ և հանքային), հանքավայրերի երկրաբանահետախուզական աշխատանքների կազմակերպումը.

լբ) օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման նախագծերին համապատասխան ամենամյա լեռնային աշխատանքների զարգացման ծրագրերի սահմանված կարգով հաստատումը.

լգ) ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և երկրաբանահետախուզական աշխատանքների պետական գրանցումն ու հաշվառումը.

լդ) ընդերքի օգտագործման, այդ թվում օգտակար հանածոների արդյունահանման հետ չկապված ստորերկրյա կառույցների շինարարության, ինչպես նաև օգտակար հանածոների հանքավայրերի մշակման ու վերամշակման նախագծերի փորձաքննության իրականացումը և իր իրավասության սահմաններում հաստատված նախագծերին համապատասխան կատարվող աշխատանքների նկատմամբ վերահսկողության իրականացումը.

լե) օգտակար հանածոների հանքավայրերի բացառությամբ հանքային ջրերի, կոնդիցիաների պարամետրերի ու պաշարների հաստատումը և վերջիններիս դուրսգրումը.

լզ) շրջակա միջավայրի պահպանության ապահովման և բնական ռեսուրսների բանական օգտագործման նպատակով սահմանված կարգով և դեպքերում թույլտվությունների, լիցենզիաների տրամադրումը, պայմանագրերի կնքումը, նորմատիվների հաստատումը.

լէ) արդյունաբերական կազմակերպությունների էկոլոգիական անձնագրերի համաձայնեցումը.

լը) Հայաստանի Հանրապետության բնապահպանական օրենսդրության պահանջների խախտմամբ իրականացվող աշխատանքների սահմանափակումը, ժամանակավորապես դադարեցումը կամ արգելումը և նշված պահանջները խախտող անձանց Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելը.

լթ) օրենքով սահմանված դեպքերում և կարգով որոշակի գոտիներ, բնակելի զանգվածներ, հանգստի ու զբոսաշրջության վայրեր փոխադրամիջոցների մուտքը ժամանակավորապես կամ մշտապես սահմանափակելը.

խ) շրջակա միջավայրի պահպանությունն ապահովող միջոցառումների իրագործման, վայրի բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների, վտանգավոր թափոնների ներմուծման, արտահանման ու տարանցիկ փոխադրման, օգտագործման համար ոչ պիտանի դեղերի ոչնչացման և սահմանված կարգով շրջակա միջավայրում դրանց տեղադրման նկատմամբ վերահսկողության իրականացումը.

խա) բնապահպանական և բնօգտագործման վճար վճարողների հաշվառումը, բնապահպանական ու բնօգտագործման վճար վճարողների հաշվառման կարգի, ինչպես նաև բնապահպանական և բնօգտագործման վճարների օբյեկտ համարվող փաստացի ծավալների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացումը.

խբ) ընդերքի շահագործման, ուսումնասիրության և երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման նկատմամբ երկրաբանական վերահսկողության իրականացումը.

խգ) հասարակայնության և զանգվածային լրատվության միջոցների հետ կապերի իրականացումը.

խդ) բնապահպանության ոլորտին վերաբերող տեղեկատվական և գիտակրթական նյութերի հրատարակումը.

խե) բնապահպանության ոլորտին վերաբերող հարցերի վերաբերյալ մեթոդական խորհրդատվության իրականացումը.

խզ) բնապահպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) նախագծերի նախապատրաստման, կնքման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման աշխատանքներին մասնակցությունը և իր իրավասության սահմաններում միջազգային համագործակցության այլ ձևերի իրականացումը.

խէ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ գործառույթների իրականացումը:

III. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

9. Նախարարությունը կառավարում է նախարարը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի առաջարկությամբ: Նախարարն ունի տեղակալներ, որոնց պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը՝ խորհրդակցելով նախարարի հետ:

Նախարարն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն կանոնադրությամբ, այլ իրավական ակտերով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

10. Նախարարն իրականացնում է նախարարությանը վերապահված խնդիրներն ու գործառույթները և պատասխանատու է լիազորված բնագավառներում քաղաքականության մշակման ու իրականացման, տիրող իրավիճակի և հեռանկարային զարգացման ապահովման համար:

11. Նախարարը հաշվետու է Հայաստանի Հանրապետության Նախագահին, Հայաստանի Հանրապետության կառավարությանը և Հայաստանի Հանրապետության վարչապետին:

12. Նախարարը

ա) իր իրավասության սահմաններում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընդունում է գերատեսչական իրավական ակտեր.

բ) ղեկավարում է նախարարության ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է նախարարության առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար.

գ) օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության բնագավառներին, նպատակներին և խնդիրներին համապատասխան առաջարկություններ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարություն.

դ) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ և տալիս ցուցումներ, առանց լիազորագրի հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության կամ նախարարության անունից, ինչպես նաև տալիս է Հայաստանի Հանրապետության կամ նախարարության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

ե) օրենքով սահմանված դեպքերում և կարգով նշանակումներ է կատարում նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոններում, ինչպես նաև նրանց նկատմամբ կիրառում է խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ.

զ) պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է իր խորհրդականներին, մամու-

հանձնարարականներ.

գ) նախարարության նպատակներին և խնդիրներին համապատասխան իրականացնում է իրեն հանձնարարված բնագավառների նախարարության համակարգի մարմիններին որոշակի հանձնարարականների և առաջադրանքների սահմանում, դրանց կատարման նկատմամբ վերահսկողություն.

դ) նախարարի հանձնարարությամբ իրականացնում է նախարարի մոտ քննարկվելիք հարցերի նախնական քննարկումները.

ե) համակարգում է իրեն հանձնարարված բնագավառներում նախարարության համակարգի մարմինների կողմից իրականացվող աշխատանքների մասնագիտական ուսումնասիրությունների և աշխատանքների ընթացքի օպերատիվ վերլուծության հետ կապված աշխատանքները.

զ) իր լիազորությունների սահմաններում համագործակցում է պետական կառավարման և այլ մարմինների, կազմակերպությունների ու հիմնարկների հետ.

է) իրեն հանձնարարված բնագավառներում համակարգում է համապատասխան զարգացման ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքները.

ը) պարբերաբար նախարարին է ներկայացնում տեղեկատվություն իրեն հանձնարարված բնագավառներում տիրող իրավիճակի մասին.

թ) ապահովում է իրեն հանձնարարված բնագավառներում նախարարի հրամանների և ցուցումների կատարման նկատմամբ վերահսկողությունը և արդյունքների մասին տեղեկացնում նախարարին.

ժ) նախարարին և աշխատակազմի ղեկավարին ներկայացնում է առաջարկություններ նրանց իրավասություններին վերաբերող հարցերի մասին.

ժա) նախարարի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:

15. Նախարարն ունի խորհրդականներ, մամուլի քարտուղար և օգնականներ, որոնց միջև սահմանում է պարտականությունների բաշխումը:

IV. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ

16. Նախարարության աշխատակազմի նպատակը և խնդիրը նախարարության (այդ թվում դրա կազմում գործող գործակալությունների և տեսչությունների) օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ վերապահված լիազորությունների լիարժեք ու արդյունավետ իրականացման, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նախարարության մասնակցության ապահովումն է:

17. Նախարարության աշխատակազմն իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող պետական կառավարչական հիմնարկ է, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, որպես պետական կառավարչական հիմնարկ, ենթակա է հաշվառման իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից:

18. Նախարարության աշխատակազմը գործում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և այլ օրենքների ու իրավական ակտերի, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:

19. Նախարարության աշխատակազմն իր իրավասության սահմաններում Հայաստանի Հանրապետության անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

20. Նախարարության աշխատակազմն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

21. Նախարարության աշխատակազմն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

22. Նախարարության աշխատակազմը չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Նախարարության աշխատակազմի կատարած գործառնությունների և մատուցած ծառայությունների համար կարող է գանձվել միայն պետական տուրք՝ օրենքով սահմանված չափով և կարգով:

23. Նախարարության աշխատակազմն իր ֆինանսական գործառնություններն իրականացնում է գանձապետական համակարգի միջոցով: Նախարարության աշխատակազմի պահպանման կարիքների համար, ինչպես նաև նախարարությանը վերապահված բյուջետային ծրագրերի շրջանակներում գնումները կատարվում են «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

24. Նախարարության աշխատակազմի պարտավորությունների համար պատասխանատվությունը կրում է Հայաստանի Հանրապետությունը:

25. Նախարարության աշխատակազմի անվանումն է՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմ:

26. Նախարարության աշխատակազմի գտնվելու վայրն է՝ քաղ. Երևան, Մոսկովյան 35:

V. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՒՅՔԸ

27. Նախարարության աշխատակազմի գույքն օրենքով սահմանված կարգով ձևավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության անունից աշխատակազմի կնքած գործարքներով ձեռք բերված և աշխատակազմի տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից (ներառյալ գույքային իրավունքները), որը հաշվառվում է դրա հաշվեկշռում: Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ նախարարության աշխատակազմին կարող է վերապահվել նաև պետական բաժնետոմսերի կամ բաժնեմասերի տիրապետման իրավասություն:

28. Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրավունք ունի ցանկացած ժամանակ վերցնելու նախարարության աշխատակազմի գույքը:

29. Նախարարության աշխատակազմն իրավունք ունի օրենքով, այլ իրավական ակտերով ու սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով, իր գործունեության նպատակներին և գույքի նշանակությանը համապատասխան, օգտագործելու, տնօրինելու և տիրապետելու իրեն հանձնված գույքը:

VI. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

30. Նախարարության աշխատակազմի կառուցվածքում ներառվում են դրա կառուցվածքային ստորաբաժանումները (վարչություններ, բաժիններ, քարտուղարություն) և առանձնացված ստորաբաժանումները (գործակալություններ, տեսչություններ):

31. Նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատում է նախարարը:

32. Նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախարարի ներկայացմամբ:

33. Նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումն օրենքով, իսկ առանձին դեպքերում նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ծառայությունների մատուցման, վերահսկողական գործառույթներ և պատասխանատվության միջոցներ կիրառող մարմին է:

34. Նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումն իրականացնում է նաև նախարարության աշխատակազմի առանձին գործառույթներ կամ դրանց մի մասը և հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից:

35. Առանձնացված ստորաբաժանումն իրավունք ունի Հայաստանի Հանրապետության անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող:

36. Նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և նախարարության աշխատակազմի ու իր հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

VII. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

37. Նախարարության աշխատակազմի կառավարումն իրականացնում են Հայաստանի Հանրապետության կառավարությունը և նախարարը օրենքով և սույն կանոնադրությամբ իրենց վերապահված իրավասությունների սահմաններում:

Նախարարության աշխատակազմը ղեկավարում է նախարարության աշխատակազմի ղեկավարը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

38. Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ա) վերակազմակերպում և դադարեցնում է նախարարության աշխատակազմի գործունեությունը.

բ) հաստատում է նախարարության աշխատակազմի կանոնադրությունը և դրանում կատարվող փոփոխությունները.

գ) որոշում է նախարարության աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը.

դ) հաստատում է նախարարության աշխատակազմի կառուցվածքը.

ե) իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով իրեն վերապահված այլ լիազորություններ:

39. Նախարարության աշխատակազմի ղեկավարն օրենքով, այլ իրավական ակտերով, նախարարի որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է նախարարության աշխատակազմի ընթացիկ գործունեությունը և կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, Հայաստանի Հանրապետության կառավարության և նախարարի որոշումների, սույն կանոնադրության պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

40. Նախարարության աշխատակազմի ղեկավարն օրենքով սահմանված կարգով գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով պետությանը պատճառված գույքային վնասի համար: Նախարարության աշխատակազմի ղեկավարի լիազորությունների դադարեցումը չի կարող հիմք հանդիսանալ պատճառված նյութական վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

41. Նախարարության աշխատակազմի ղեկավարը պարտավոր է չկատարել հիմնադրի, նախարարի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամաններն ու հրահանգները:

42. Նախարարության աշխատակազմի ղեկավարի բացակայության կամ պաշտոնական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրան փոխարինում է նրա տեղակալներից մեկը նախարարի հրամանով:

43. Նախարարության աշխատակազմի ղեկավարը

ա) առանց լիազորագրի իր իրավասության սահմաններում հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից և ներկայացնում նրա շահերը, իր լիազորության սահմաններում դատարանում հանդես է գալիս որպես հայցվոր կամ պատասխանող, տալիս է լիազորագրեր դատարանում գործը վարելու և դատավարական այլ գործողություններ իրականացնելու համար.

բ) օրենքով, այլ իրավական ակտերով, հիմնադրի և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հիմնարկին ամրացված պետական գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները.

գ) իր իրավասության սահմաններում տալիս է Հայաստանի Հանրապետության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

դ) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված իր լիազորությունների սահմաններում պաշտոնի (աշխատանքի) նշանակում և պաշտոնից (աշխատանքից) ազատում է նախարարության աշխատակազմի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսանքի ու կարգապահական տույժի միջոցներ.

ե) օրենքով սահմանված դեպքերում և կարգով շնորհում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության դասային աստիճաններ.

զ) օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ.

է) նախարարի հաստատմանն է ներկայացնում նախարարության աշխատակազմի տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, այդ թվում ապահովում է նախարարության աշխատակազմի հաշվապահական հաշվառման վարումը, ֆինանսական հաշվետվությունների կազմումը և ներկայացնելը, նախարարի հաստատմանն է ներկայացնում նախարարության աշխատակազմի տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականը, տարեկան ֆինանսական հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, միջոցներ է ձեռնարկում ստուգումներով հայտնաբերված ֆինանսական խախտումների վերացման համար.

ը) նախարարին ներկայացնում է առաջարկություններ նախարարության աշխատակազմի գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ.

թ) կազմակերպում է նախարարության բյուջեի նախագծի նախապատրաստական աշխատանքները և ապահովում բյուջետային միջոցների ծախսերի կատարումը.

ժ) կազմակերպում է նախարարությունում քննարկումների և խորհրդակցությունների անցկացումը.

ժա) վերահսկում է նախարարության աշխատակազմի կողմից սահմանված ժամկետներում աշխատանքների կատարման ընթացքը.

ժբ) նախարարի ստորագրությանն է ներկայացնում նախարարի հրամանները, ինչպես նաև կարգադրությունները.

ժգ) ապահովում է համագործակցությունը Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմինների աշխատակազմերի հետ.

ժդ) կազմակերպում է նախարարությունում գործավարության և տեխնիկական սպասարկման աշխատանքները.

ժե) իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

44. Նախարարության աշխատակազմի գլխավոր ֆինանսիստը ղեկավարում է նախարարության աշխատակազմի ֆինանսական ու հաշվապահական ծառայությունները, գործում է նախարարության աշխատակազմի ղեկավարի անմիջական ենթակայությամբ և իրականացնում «Գանձապետական համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով իր վրա դրված լիազորությունները:

45. Նախարարության աշխատակազմի գլխավոր ֆինանսիստը պատասխանատու է հաշվապահական հաշվառումը վարելու, նախարարության աշխատակազմի ֆինանսական, բյուջետային, հարկային, վիճակագրական, պարտադիր վճարների հաշվետվությունները ժամանակին կազմելու համար:

VIII. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

46. Նախարարության աշխատակազմը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և համապատասխան մարմիններ է ներկայացնում ֆինանսական, հարկային, մաքսային, պարտադիր վճարների վիճակագրական, ինչպես նաև վարչական հաշվետվություններ, հաշվարկներ, հայտարարագրեր:

47. Նախարարության աշխատակազմի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել վերստուգման (աուդիտի) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

IX. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

48. Նախարարության աշխատակազմի վերակազմակերպման և դրա գործունեության դադարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Մ. Թոփուզյան**

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2002 թվականի
օգոստոսի 8-ի N 1237-Ն որոշման

Կ Ա Ռ Ո Ւ Ց վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

I. Կառուցվածքային ստորաբաժանումներ

Նորմատիվամեթոդական վարչություն

Միջազգային համագործակցության վարչություն

Մթնոլորտի պահպանության բաժին

Ջրային ռեսուրսների պահպանության բաժին

Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարման բաժին

Կենսաբազմազանության պահպանության բաժին

Հողերի պահպանության բաժին

Ընդերքի պահպանության բաժին

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման բաժին

Բնապահպանության և բնօգտագործման էկոնոմիկայի բաժին

Ֆինանսահաշվապահական բաժին

Քարտուղարություն

II. Առանձնացված ստորաբաժանումներ

Ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն

Հիդրոօդերևութաբանության և շրջակա միջավայրի մոնիտորինգի գործակալություն

Օգտակար հանածոների պաշարների գործակալություն

Երկրաբանության գործակալություն

Կենսառեսուրսների կառավարման գործակալություն

Բնապահպանական պետական տեսչություն

Ատոմային էներգիայի օգտագործման միջուկային և ռադիացիոն անվտանգության տեսչություն

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Մ. Թոփուզյան**

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
16 օգոստոսի 2003 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2003 թվականի N 970-Ն

794 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 8-Ի N 1237-Ն ՈՐՈՇՄԱՆ* ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 8-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 1237-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի կառուցվածքի «Ի. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնում՝

ա) «Միջազգային համագործակցության վարչություն» տողից հետո լրացնել «Շրջակա միջավայրի պահպանության վարչություն» տողը.

բ) «Ընդերքի պահպանության բաժին» բառերը փոխարինել «Ընդերքի պահպանության վարչություն» բառերով.

գ) հանել «Սթնոլորտի պահպանության բաժին», «Ջրային ռեսուրսների պահպանության բաժին», «Կենսաբազմազանության պահպանության բաժին», «Հողերի պահպանության բաժին» և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման բաժին» տողերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ա. Մարգարյան**

2003 թ. օգոստոսի 7
Երևան

---

* ՀՀՊՏ 2002 N 40 (215), 18.09.02

«Վավերացնում եմ»

Հայաստանի Հանրապետության

Նախագահ Ռ. Քոչարյան

10 ապրիլի 2004 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 մարտի 2004 թվականի N 420-Ն

533 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 1619-Ն ՈՐՈՇՈՒՄՆ[1] ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 8-Ի N 1237-Ն ՈՐՈՇՄԱՆ[2] ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի հիդրոօդերևութաբանության և շրջակա միջավայրի մոնիտորինգի գործակալությունը վերակազմակերպել օդերևութաբանության և մթնոլորտի աղտոտվածության մոնիտորինգի բաժնի՝ աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանման կարգավիճակով:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության հիդրոօդերևութաբանության և շրջակա միջավայրի մոնիտորինգի գործակալության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» N 1619-Ն որոշումը:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 8-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու և «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 1237 - Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝

որոշման 2-րդ կետի «բ» ենթակետով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի կառուցվածքից հանել «Հիդրոօդերևութաբանության և շրջակա միջավայրի մոնիտորինգի գործակալություն» բառերը, իսկ կառուցվածքի «Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարման բաժին» բառերից հետո լրացնել «Օդերևութաբանության և մթնոլորտի աղտոտվածության մոնիտորինգի բաժին» բառերով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ա. Մարգարյան**

2004 թ. ապրիլի 7
Երևան

---

1 ՀՀՊՏ 2002 N 47 (222), 06.11.02

2 ՀՀՊՏ 2002 N 40 (215), 18.09.02

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
24 ապրիլի 2004 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ապրիլի 2004 թվականի N 545-Ն

602 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 8-Ի N 1237-Ն ՈՐՈՇՄԱՆ[1] ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունվարի 15-ի N 7-Ն որոշման[2] 4-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 8-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 1237-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կանոնադրության՝

ա) 7-րդ կետի «ա» ենթակետից հանել «այդ թվում՝ անտառների և» բառերը, իսկ «բ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ) շրջակա միջավայրի՝ ընդերքի, հողերի, ջրերի, մթնոլորտի, կենդանական ու բուսական աշխարհի, այդ թվում՝ բնության հատուկ պահպանվող տարածքների (ներառյալ այդ տարածքների անտառները) վրա վնասակար ներգործությունների կանխարգելման կամ նվազեցման, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության, բնական ռեսուրսների բանական օգտագործման և վերարտադրության պետական կառավարման ապահովումը».

բ) 8-րդ կետի «ա» ենթակետից հանել «ներառյալ անտառի» բառերը.

գ) 8-րդ կետը «լէ» ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «լէ՝» ենթակետով.

«լէ՝) Հայաստանի Հանրապետության անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման համար Հայաստանի Հանրապետության օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված նորմերի ու կանոնների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ա. Մարգարյան**

2004 թ. ապրիլի 21
Երևան

---

1 ՀՀՊՏ 2002 N 40 (215), 18.09.02
2 ՀՀՊՏ 2004 N 8 (307), 11.02.04